**Ծնողներ/Խնամակալներ – Արդյո՞ք ձեր երեխան պատրաստ է դպրոց հաճախելուն:**

# ԴՊՐՈՑ ՀԱՃԱԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐ

Խնդրում ենք գրանցման ժամանակ ձեզ հետ բերել ձեր երեխայի պատվաստումների վերաբերյալ փաստաթղթերը: Դուք կարող եք դիտել և տպել ձեր երեխայի՝ Կալիֆորնիայի պատվաստանյութի գրանցման թվային պատճենը հետևյալ հասցեով՝ MyVaccineRecord.CDPH.CA.gov

## Անցումային մանկապարտեզ կամ մանկապարտեզ ընդունվող երեխաներին անհրաժեշտ են.

- ☐ **Դիֆթերիա, տետանուս և կապույտ հազ (DTaP, DTP, Tdap կամ Td) — 5 դեղաչափ**
  4 դեղաչափն ԸՆԴՈՒՆԵԼԻ է, եթե դրանցից մեկը տրվել է 4-րդ տարեդարձի օրը կամ դրանից հետո, 3 դեղաչափն ԸՆԴՈՒՆԵԼԻ է, եթե դրանցից մեկը տրվել է 7-րդ տարեդարձի օրը կամ դրանից հետո:
- ☐ **Պոլիո (IPV կամ OPV) — 4 դեղաչափ**
  3 դեղաչափն ԸՆԴՈՒՆԵԼԻ է, եթե դրանցից մեկը տրվել է 4-րդ տարեդարձի օրը կամ դրանից հետո:
- ☐ **Հեպատիտ B — 3 դեղաչափ**
- ☐ **Կարմրուկ, խոզուկ և կարմրախտ (MMR) — 2 դեղաչափ**
  Երկու դեղաչափերը պետք է տրվեն 1-ին տարեդարձի օրը կամ դրանից հետո:
- ☐ **Վարիցելլա (Ջրծաղիկ) — 2 դեղաչափ**

## Նոր և տեղափոխվող աշակերտները, որոնք սկսում են TK/K-12-րդ դասարանը պետք է ստացած լինեն.

- ☐ **Վերոնշյալ բոլոր պատվաստումները**
  7-րդից 12-րդ դասարաններ՝ 7-րդ ծննդյան օրը կամ դրանից հետո պահանջվում է կապույտ հազ պարունակող պատվաստանյութի առնվազն 1 դեղաչափ: Հեպատիտ B պատվաստանյութը պահանջվում է ցանկացած դասարանի համար, բացառությամբ 7-րդ դասարանի:

## 7-րդ դասարանը սկսող աշակերտներից պահանջվում է.

- ☐ **Տետանուս, դիֆթերիա, կապույտ հազ (Tdap) — 1 դեղաչափ**
- ☐ **Վարիցելլա (Ջրծաղիկ) — 2 դեղաչափ**

## Ի՞նչ այլ պատվաստանյութի մասին պետք է հարցնեմ իմ բուժաշխատողին:

Երբ այցելում եք ձեր բուժաշխատողին դպրոցական պատվաստումների համար, համոզվեք, որ հարցրեք նաև այլ պատվաստանյութերի մասին, որոնք օգնում են ձեր երեխային առողջ պահել, ներառյալ **հեպատիտ A, COVID-19 և տարեկան գրիպի պատվաստումը**: Մինչդեռահասները և դեռահասները պետք է ստանան նաև **մարդու պապիլոմավիրուսի (HPV) պատվաստանյութ**՝ պաշտպանվելու որոշ քաղցկեղներից և **մենինգոկոկի դեմ պատվաստանյութեր**:

**Ավելին իմացեք** այն պատվաստանյութերի մասին, որոնք անհրաժեշտ են ձեր երեխային ըստ նրա տարիքի (bit.ly/CDCVaccinesByAge) **և** որտեղ կարող եք պատվաստել ձեր երեխային (bit.ly/Where2BVaxed):